


ՀՀ արտաքին առևտրի համապարփակ վերլուծությունը՝ ԵԱՏՄ և ԵՄ տնտեսական հարաբերությունների զարգացման համատեքստում


Վարդանյան Տաթևիկ Գ.

*տ.գ.թ., Բիզնես վարչարարության ամբիոնի ավագ դասախոս,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0001-6488-2717>
tatev.vardanyan.asue@gmail.com


Մեղրումյան Հովհաննես Հ.

*տ.գ.թ., Ֆինանսական շուկաների և ինստիտուտների ամբիոնի դասախոս,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0003-3597-8079>
hovhannemelkumyan@paara.am


Մինասյան Սուրեն Ա.

*Բիզնես վարչարարության ամբիոնի դասախոս,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0002-0836-6571>
minasiansouren@gmail.com


Այվազյան Աննա Ա.

*Կառավարման ամբիոնի դասախոս
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0006-1025-0013>
ayvazyananna96@gmail.com

Նազարյան Արմեն Գ.

*«Հանրային կառավարում» մագիստրոսական ծրագրի մագիստրոս,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0009-0009-0594-8865>
armen.nazaryan.01@internet.ru

ՀՏԳ՝ 339.5, 339.9; EDN: RRVDZQ; JEL: B17, B27, P33, P45, Q37,

DOI: 10.58587/18292437-2026.1-171

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ ԵՄ, ԵԱՏՄ, Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (CEPA), GSP+ համակարգ, առևտրի ինտենսիվություն, առևտրի կենտրոնացվածություն, բացահայտված համեմատական առավելության (RCA) համաթիվ

Комплексный анализ внешней торговли Армении в контексте развития экономических отношений ЕАЭС и ЕС

Варданян Татевик Г.

*к.э.н., старший преподаватель кафедры делового администрирования,
Государственный экономический университет Армении (Ереван, РА)*

Мелкумян Оганес А.

*к.э.н., преподаватель кафедры финансовых рынков и институтов,
Государственный экономический университет Армении (Ереван, РА)*

Минасян Сурен А.

*Преподаватель кафедры делового администрирования,
Государственный экономический университет Армении (Ереван, РА)*

Айвазян Анна А.

*Преподаватель кафедры менеджмента,
Государственный экономический университет Армении (Ереван, РА)*

Назарян Армен Г.

*Студент магистратуры государственного управления,
Государственный экономический университет Армении (Ереван, РА)*

Аннотация. Статья представляет всесторонний анализ внешней торговли Армении в контексте ЕАЭС и Соглашения о всеобъемлющем и расширенном партнёрстве с ЕС (СЕРА). Присоединение к ЕАЭС в 2015 г. обеспечило свободное обращение товаров и упрощённый доступ на российский рынок, но усилило зависимость: в 2023 г. на Россию приходилось около 80 % армянского экспорта в ЕАЭС. СЕРА, подписанное в 2017 г. после срыва переговоров по Ассоциации с ЕС, ориентировано на институциональные реформы и сближение законодательства с нормами ЕС без создания зоны свободной торговли.

С 2012 по 2024 гг. внешнеторговый оборот Армении вырос с 5,9 до более 30 млрд долл. США; экспорт увеличился более чем в 9 раз, импорт почти в 4 раза. Экспорт по-прежнему концентрируется на минеральном сырье и драгоценных металлах, но доля переработанной и технологичной продукции постепенно растёт. До 2023 г. Армения пользовалась льготным режимом GSP+ ЕС с высоким уровнем использования (около 70 %), но утратила его после перехода в категорию стран с доходом выше среднего.

География торговли изменилась: доля ЕС в экспорте снизилась с ~30 % в 2014 г. до 15 % в 2023 г., тогда как ЕАЭС вырос до ~50 %. Индексы интенсивности показывают спад активности с обеими группами, но концентрация (HHI) для ЕАЭС остаётся крайне высокой из-за доминирования России. Сравнение правовых режимов выявляет обязательные общие тарифы ЕАЭС против добровольной гармонизации СЕРА. Рекомендуется сохранять доступ к рынку ЕАЭС, параллельно углубляя реформы по стандартам ЕС и расширяя диверсификацию партнёров для снижения рисков и укрепления долгосрочной конкурентоспособности.

Ключевые слова и словосочетания: ЕС, ЕАЭС, Соглашение о всеобъемлющем и расширенном партнёрстве (СВРП), система ВСП+, интенсивность торговли, концентрация торговли, выявленное сравнительное преимущество (ВСП)

Comprehensive analysis of Armenia's foreign trade in the context of the development of economic relations between the EAEU and the EU

Vardanyan Tatevik G.

*PhD, Senior Lecturer, Department of Business Administration,
State University of Economics of Armenia (Yerevan, RA)*

Melkumyan Hovhannes H.

*PhD, Lecturer, Department of Financial Markets and Institutions,
State University of Economics of Armenia (Yerevan, RA)*

Minasyan Suren A.

*Lecturer, Department of Business Administration,
State University of Economics of Armenia (Yerevan, RA)*

Ayvazyan Anna A.

*Lecturer, Department of Management
State University of Economics of Armenia (Yerevan, RA)*

Nazaryan Armen G.

*Master Student of Public Administration,
State University of Economics of Armenia (Yerevan, RA)*

Abstract. The article provides a comprehensive analysis of Armenia's foreign trade within the dual framework of the EAEU and the EU–Armenia Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA). Armenia's accession to the EAEU in 2015 ensured access to a common customs area and simplified trade with Russia, but increased dependence on that market: in 2023 Russia accounted for about 80% of Armenian exports to the EAEU. CEPA, signed in 2017 after the collapse of the planned EU Association Agreement, promotes institutional reforms and legal alignment with EU standards without establishing a free-trade zone.

Between 2012 and 2024 Armenia's external trade grew from USD 5.9 billion to over USD 30 billion; exports rose more than ninefold to USD 13 billion, imports almost quadrupled. Export structure is still dominated by minerals and precious metals, but the share of processed and technology goods is slowly increasing. Until 2023 Armenian exporters benefited from the EU's GSP+ preferential regime, achieving a high 70 % utilisation rate, but this ended when Armenia moved to upper-middle-income status.

Geographically, export orientation shifted: the EU's share fell from about 30% in 2014 to 15% in 2023, while the EAEU rose to nearly 50 %. Trade-intensity indices show declining activity with both blocs, but concentration (HHI) remains very high for the EAEU due to Russia's dominance. Legal comparison highlights the EAEU's mandatory common tariffs versus CEPA's voluntary regulatory convergence. The study recommends maintaining EAEU market access while deepening EU-aligned reforms and diversifying trade partners to reduce vulnerability and ensure long-term competitiveness.

Keywords & phrases: EU, EAEU, Comprehensive and Enhanced Partnership Agreement (CEPA), GSP+ system, trade intensity, trade concentration, revealed comparative advantage (RCA)

Ներածություն

ԵԱՏՄ և ԵՄ տնտեսական հարաբերությունների զարգացման համատեքստում ՀՀ-ի առջև ծառայած մարտահրավերներն ու առկա հնարավորությունները հասկանալու համար առանցքային է վերլուծել ինչպես ՀՀ առևտրի կառուցվածքը, զարգացման դինամիկան ու միտումները, այնպես էլ տարածաշրջանային (ինտեգրացիոն) համագործակցության շրջանակներում գործող համաձայնագրերի տրամաբանությունը: ԵԱՏՄ-ին անդամակցությունը և ԵՄ-ի (ԵՄ երկրների) հետ ստորագրված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը («ՀԸԳՀ/CEPA») ձևավորել են երկու կարևորագույն ուղղություն ՀՀ առևտրային քաղաքականության և տնտեսական ինտեգրման համար:

Վերլուծություն

2010 թ. ՀՀ-ն և ԵՄ-ն մեկնարկեցին Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունները, որը ներառում էր ինչպես քաղաքական համագործակցություն, այնպես էլ Խոր և համապարփակ ազատ առևտրի գոտու («DCFTA») ստեղծում: Կողմերը 2013 թ. փաստացի ավարտել էին բանակցությունները, և նախատեսվում էր համաձայնագրի նախատորագրում, սակայն Հայաստանի մտադրությունը՝ միանալու Եվրասիական մաքսային միությանը և հետագայում՝ ԵԱՏՄ-ին, փաստացի դադարեցրեց այս գործընթացը:

ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցությունը ձևավորվեց մի շարք ռազմավարական, քաղաքական և տնտեսական իրողությունների համադրությամբ: Կայացված որոշումը հիմնավորվում էր երկրի տնտեսական անվտանգության, էներգետիկ կայունության ապահովման, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության և ԵԱՏՄ պոտենցիալ անդամ այլ երկրների հետ արդեն առկա սերտ տնտեսական կապերի խորացման անհրաժեշտությամբ: Փաստացի այս քայլը փոխեց երկրի արտաքին տնտեսական ուղղվածության հավասարակշռությունը՝ դադարեցնելով եվրասիական ինտեգրման գործընթացը:

Հայաստանը պաշտոնապես դարձավ ԵԱՏՄ լիիրավ անդամ 2015 թ. հունվարի 2-ից՝ միանալով ԵԱՏՄ-ն կազմող (հիմնադիր) անդամներին՝ Ռուսաստանին, Բելառուսին և Ղազախստանին: ԵԱՏՄ շրջանակում Հայաստանը ստացավ մուտք միասնական մաքսային տարածք, ազատ ապրանքների և ծառայությունների շրջանառության իրավունք, ինչպես նաև որոշ բացառություններ և անցումային պայմաններ՝ մաքսային տուրքերի և կարգավորումների մասով: Անդամակցությունը ազդեց նաև երկրի ներքին օրենսդրության հարմարեցման գործընթացների վրա՝ կապված տեխնիկական կարգավորումների, սանիտարական և ֆիտոսանիտարական

չափանիշների միակերպման հետ: Այս ամբողջ գործընթացը ձևավորեց Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականության նոր առաջնահերթությունները, որում ԵԱՏՄ-ն ստացավ կենտրոնական դեր:

Չնայած ՀՀ-ԵՄ Ասոցացման համաձայնագրի ստորագրման ձախողված փորձին՝ կողմերը վերսկսեցին աշխատանքները երկկողմ հարաբերությունների իրավակարգավորման նոր շրջանակի հաստատման ուղղությամբ: Արդյունքում 2017 թ. նոյեմբերի 24-ին ստորագրվեց Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը, որը Հայաստանի արտաքին քաղաքական և տնտեսական օրակարգի կարևորագույն ձեռքբերումներից մեկն է և ԵՄ-ի հետ հարաբերությունների կարգավորման փաստացի գոյություն ունեցող միակ փաստաթուղթը: ՀԸԳՀ-ն մշակվել է այն տրամաբանությամբ, որ Հայաստանը, միանալով ԵԱՏՄ-ին, հրաժարվել էր ԵՄ Ասոցացման համաձայնագրի ազատ առևտրի մասից, սակայն ունի խոր տնտեսական, իրավական և ինստիտուցիոնալ բարեփոխումների շահ: ՀԸԳՀ-ն այդ առումով դարձավ միակն իր տեսակի մեջ փաստաթուղթ, որը մի կողմից պահպանեց ԵՄ հետ համագործակցության խորության բարձր մակարդակը, մյուս կողմից չէր հակասում ԵԱՏՄ անդամակցության պարտավորություններին:

ՀԸԳՀ-ն ներառում է համագործակցության շուրջ 30 ոլորտ, այդ թվում՝ արդարադատություն, մաքսային կարգավորումներ, պետական գնումներ, շրջակա միջավայր, էներգետիկա, մրցակցություն և այլն: Այն չներառեց ազատ առևտրի գոտու ստեղծման դրույթներ, սակայն ապահովեց բարեփոխումների ինստիտուցիոնալ խթանում՝ տեխնիկական ստանդարտների, սննդի անվտանգության, բնապահպանական նորմերի և առևտրի պարզեցման ուղղություններով: Համաձայնագրի շրջանակում Հայաստանը պարտավորվել է իր օրենսդրությունը մոտեցնել ԵՄ իրավակարգին՝ նպաստելով կառավարման թափանցիկության բարձրացմանը և ներդրումային միջավայրի բարելավմանը: Այս ամենը հնարավորություն էր տալիս Հայաստանի արտահանողներին՝ ավելի դյուրին մուտք գործելու ԵՄ շուկա՝ չնայած այն հանգամանքին, որ տևական ժամանակ (2009-2022 թթ.) մաքսային արտոնություններն իրականացվում էին ԵՄ «Արտոնությունների ընդհանրացված և համարված համակարգ» (GSP+) արտոնյալ առևտրային ռեժիմի շրջանակներում: Վերջինս հնարավորություն էր տալիս՝ հայկական շուրջ 6,000 ապրանքատեսակի արտահանումը դեպի ԵՄ շուկա իրականացնելու առանց կամ նվազեցված մաքսատուրքերի, ինչը զգալիորեն բարձրացնում էր հայկական արտադրանքի մրցունակությունը եվրոպական շու-

կայում: GSP+ համակարգի նպատակն էր խթանել զարգացող երկրների արտահանումը, աջակցել տնտեսական զարգացմանն ու բարեփոխումներին և խրախուսել միջազգային ստանդարտների պահպանումը մարդու իրավունքների, աշխատանքային իրավունքների, շրջակա միջավայրի և լավ կառավարման ոլորտներում:

Արտոնությունների առկայությունը, սակայն, դեռևս չի նշանակում դրանց լիարժեք օգտագործում: Դրա համար կիրառվում է GSP օգտագործման մակարդակի (utilization rate) ցուցանիշը, որը ցույց է տալիս, թե արտոնյալ արտահանման հնարավորության քանի տոկոսից են իրականում օգտվել պոտենցիալ շահառու ընկերությունները: Համակարգի գործարկման վերջին տարիների տվյալները վկայում են, որ Հայաստանի համար GSP+ համակարգի օգտագործման մակարդակը տատանվել է միջինում 60-70%-ի սահմաններում, ինչն ամենաբարձր ցուցանիշներից էր GSP+ համակարգի շահառու երկրների շրջանում: Ըստ ԵՄ հրապարակված վիճակագրության՝ 2021թ. Հայաստանի համար GSP+ համակարգի օգտագործման մակարդակը կազմել է մոտ 70% [5, էջ 3]: Սա նշանակում է, որ ԵՄ արտահանվող այն ապրանքների մոտ երկու երրորդը, որոնք կարող էին արտահանվել արտոնյալ ռեժիմով, իրականում արտահանվել են այդ հնարավորությունից օգտվելով: Այնուամենայնիվ, առկա են եղել չօգտագործված հնարավորություններ, որոնք կապված են եղել ինչպես արտադրության սահմանափակումների, այնպես էլ սերտիֆիկացման և շուկայի պահանջների հետ:


2023 թվականից Հայաստանը դուրս է եկել GSP+ համակարգից, քանի որ ըստ ԵՄ

չափանիշների՝ դարձել է միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր և այլևս չի համապատասխանում ծրագրի շահառուի կարգավիճակին: Այս հանգամանքը կարող է ազդեցություն ունենալ Հայաստանի և ԵՄ երկրների միջև առևտրային հարաբերությունների վրա, քանի որ արտոնյալ մաքսատուրքերի համակարգը այլևս չի գործում: Այնուամենայնիվ, մինչ այդ GSP+ համակարգը կարևոր գործիք էր Հայաստանի արտահանող ձեռնարկությունների համար՝ նպաստելով արտահանման ծավալների և որակի աճին, ինչպես նաև արտահանման շուկաների դիվերսիֆիկացմանը: Ընդհանուր առմամբ, GSP+ համակարգում Հայաստանի մասնակցությունը և դրա օգտագործման մակարդակը կարևոր դեր են խաղացել երկրի տնտեսական զարգացման և արտաքին առևտրի դիվերսիֆիկացման գործում:

Այսպիսով՝ ՀԸԳՀ-ն այսօր կարող է դիտվել որպես բալանսավորող գործիք՝ Հայաստանի եվրոպական գործընկերների հետ հարաբերությունների խորացման և համապարփակ բարեփոխումների շարունակման համար:

ՀՀ արտաքին առևտրում ԵՄ և ԵԱՏՄ նշանակությունը գնահատելու համար անհրաժեշտ է նախ և առաջ վերլուծել այս երկու ուղղություններով ՀՀ արտաքին առևտրի վիճակագրությունն ու անդրադառնալ այնպիսի ցուցանիշների, ինչպիսիք են ԵԱՏՄ և ԵՄ-ի հետ Հայաստանի արտահանման և ներմուծման ինտենսիվության ու կենտրոնացվածության համաթվերը, ինչպես նաև ԵԱՏՄ և ԵՄ-ի հետ Հայաստանի արտահանման և ներմուծման համեմատական առավելության ցուցանիշը (Revealed Comparative Advantage Index):

Գծապատկեր 1. ՀՀ արտաքին առևտրի 2012-2024թթ., մլրդ ԱՄՆ դոլար [2]



Ընդհանուր առմամբ, ՀՀ արտաքին առևտուրը վերջին մի քանի տարիներին կայուն տեմպով աճել է: 2014-2024թթ., մասնավորապես, ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունն աճել է գրեթե 5 անգամ՝ 2024 թ. կազմելով 30.2 մլրդ

ԱՄՆ դոլար՝ 2012 թ. 5.9 մլրդ ԱՄՆ դոլարի համեմատ: Հատկանշական է, որ նույն ժամանակահատվածում ՀՀ-ից արտահանումն աճել է ավելի քան 9 անգամ (1.5 մլրդից մինչև 13.1 մլրդ ԱՄՆ դոլար), ներմուծումը՝ մոտ 4 անգամ (4.5

մյուսից մինչև 17.1 մլրդ ԱՄՆ դոլար), ինչը վկայում է արտաքին պահանջարկի և ներմուծվող ապրանքների նկատմամբ սպառողական ու արտադրական պահանջարկի կայուն աճի մասին [2]:


Այս միտումները, մասնավորապես՝ արտահանման առանցիկ աճը ներմուծման նկատմամբ, նպաստում են արտաքին առևտրային դեֆիցիտի հարաբերական կրճատմանը և արտահանելի հատվածի ընդլայնմանը: Միևնույն ժամանակ, ներմուծման աճը խոսում է տնտեսական ակտիվության և ներքին շուկայի պահանջարկի ընդլայնման մասին: Արտաքին առևտրի կառուցվածքային փոփոխությունները, հատկապես վերջին տարիներին ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի հետ հարաբերությունների խորացման ֆոնին, վերափոխում են նաև ապրանքների և գործընկեր երկրների կազմը՝ ձևավորելով նոր տնտեսական հնարավորություններ:

Գծապատկեր 2-ը և ս փաստում է, որ վերջին տասնամյակում ՀՀ արտաքին առևտրի ծավալները զգալիորեն աճել են: Ընդ որում՝ 2014-2020 թվականներին արտահանման և ներմուծման

ցուցանիշները փոփոխվել են համեմատաբար դանդաղ տեմպերով, սակայն 2021 թվականից հետո երկու ուղղություններով էլ արձանագրվել է կտրուկ աճ: 2024 թվականին ներմուծման ծավալը հասել է շուրջ 17 միլիարդ ԱՄՆ դոլարի, իսկ արտահանման ծավալը՝ մոտ 13 միլիարդ ԱՄՆ դոլարի:

Այս աճի հիմնական շարժիչ ուժերից է եղել Ռուսաստանի, Արաբական Միացյալ Էմիրությունների և Չինաստանի հետ առևտրի ծավալների բազմակի ավելացումը: Առանձնահատուկ դեր է ունեցել ոչ միայն ապրանքների իրական արտահանումը, այլև վերաարտահանումը՝ հատկապես ռուսական ոսկու և ադամանդի, որոնք Հայաստանի միջոցով արտահանվել են դեպի այլ երկրներ, հիմնականում՝ ԱՄԷ: Միևնույն ժամանակ, ներմուծման կառուցվածքում մեծ տեղ են զբաղեցնում չմշակված կամ կիսամշակված ոսկին, հեռախոսային և հեռագրային սարքավորումները, ինչպես նաև բնական գազը և ավտոմեքենաները [1], որոնց առավել մանրամասն կանդիդատներն են հետագա շարադրանքում:

Գծապատկեր 2. ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը, արտահանումը և ներմուծումը 2012-2024թթ., մլրդ ԱՄՆ դոլար [2]



Այս միտումները վկայում են Հայաստանի արտաքին առևտրի ակտիվացման, շուկաների դիվերսիֆիկացման և տնտեսական կառուցվածքի փոփոխության մասին: Սակայն գաղտնիք չէ, որ նման կտրուկ աճը հիմնականում պայմանավորված է վերաարտահանման ու արտաքին շուկաների ժամանակավոր հնարավորություններով, ինչը երկարաժամկետ հեռանկարում կարող է բերել ռիսկեր երկրի տնտեսության կայունության համար

ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը տարիների ընթացքում աչքի է ընկել ապրանքային խմբերի զգալի կենտրոնացվածությամբ: Մասնավորապես, արտաքին առևտրի ընդհանուր ծավալում մշտապես գերակշռող են եղել

ընդամենը 2-3 ապրանքախմբեր, որոնք միասին կազմում են առևտրի ավելի քան 50 տոկոսը: Այս միտումը վկայում է արտահանման և ներմուծման կառուցվածքի խոցելիության և սահմանափակ դիվերսիֆիկացիայի մասին:

Թեև 2012-2023 թթ. ընթացքում որոշակի փոփոխություններ են արձանագրվել առաջատար ապրանքախմբերի դասավորության մեջ՝ պայմանավորված ինչպես համաշխարհային շուկաների դինամիկայով, այնպես էլ ներքին տնտեսական ու արտադրական կարողությունների փոփոխություններով, սակայն այդ ապրանքախմբերի դոմինանտ դիրքը պահպանվել է: Դա պայմանավորված է ոչ միայն պատմականորեն ձևավորված տնտեսական կառուցվածքով, այլ

նաև որոշ ռեսուրսների՝ տնտեսության մեջ մշտական ու բարձր պահանջարկով:


Օրինակ՝ վառելիքաէներգետիկ ապրանքների (նավթամթերք, գազ, էլեկտրաէներգիա և այլն) ներմուծման կայուն բարձր մակարդակը հիմնականում բացատրվում է ներքին արտադրության սահմանափակ հնարավորություններով և էներգակիրների նկատմամբ բարձր կախվածությամբ: Հայաստանը, չունենալով էական բնական ռեսուրսներ այս ոլորտում, ստիպված է բավարարել իր էներգետիկ պահանջները արտաքին մատակարարումների միջոցով: Սա տնտեսության համար ստեղծում է և՛ ռիսկեր, և՛ ռազմավարական քաղաքականության ձևավորման անհրաժեշտություն՝ ուղղված էներգետիկ անվտանգությանը, փոխարինման ներուժի զարգացմանը (օրինակ՝ վերականգնվող էներգիայի խթանմանը) և ավելի դիվերսիֆիկացված արտաքին առևտրի կառուցվածքի ապահովմանը:

Ընդհանուր առմամբ, ապրանքային խմբերի մասն կենտրոնացումը ոչ միայն տնտեսության

կառուցվածքային առանձնահատկությունն է, այլ նաև արտաքին շուկայում աննշան տատանումների պայմաններում կարող է հանգեցնել լուրջ տնտեսական հետևանքների: Հետևաբար, արտաքին առևտրի դիվերսիֆիկացիան և արտահանման քաղաքականության վերանայումը մնում են Հայաստանի տնտեսական ռազմավարության առանցքային ուղղություններից մեկը:

2012 և 2023 թվականների միջև Հայաստանի արտահանման և ներմուծման ապրանքային կառուցվածքում նկատվում են մի շարք կարևոր փոփոխություններ, որոնք արտացոլում են երկրի տնտեսական զարգացման և արտաքին առևտրի դիվերսիֆիկացման միտումները: 2012 թվականին արտահանման հիմնական հենարանը կազմում էին հանքահումքային արտադրանքները, ինչպիսիք են պղինձը, մոլիբդենը և ոսկին, որոնք երկար տարիներ եղել են Հայաստանի տնտեսության առանցքային բաղադրիչները:

Գծապատկեր 3. ՀՀ արտահանման ապրանքային կառուցվածքը 2012թ. (ձախից) և 2024թ. (աջից), % [2]




Այս ապրանքների մեծ մասն արտահանվել է հումքային կամ կիսամշակված վիճակում, ինչը ցույց է տալիս, որ երկրի արդյունաբերական ներուժը դեռևս սահմանափակ է և հիմնականում հիմնված է հումքի հանքարդյունաբերության վրա: Նույն տարում գյուղատնտեսական և սննդի արտադրանքների արտահանումը ունեցել է փոքր մասնաբաժին, ինչը պայմանավորված էր ինչպես ներքին սպառման պահանջարկով, այնպես էլ արտահանման շուկաների սահմանափակ հնարավորություններով:


2024 թվականին արտահանման կառուցվածքում նկատվում է որոշակի փոփոխություն. հանքահումքային արտադրանքները շարունակում են մնալ գերակշիռ, սակայն արտահանման մեջ աճում է վերամշակող արդյունաբերության և տեխնոլոգիական արտադրանքի մասնաբաժինը:

Սա վկայում է այն մասին, որ Հայաստանը փորձում է զարգացնել իր արդյունաբերական հատվածը, ավելացնել արտահանվող ապրանքների ավելացված արժեքը և նվազեցնել տնտեսության հումքային կախվածությունը: Վերամշակող արդյունաբերության զարգացումը հնարավորություն է տալիս՝ ստեղծելու նոր աշխատատեղեր և ներգրավելու ներդրումներ: Միաժամանակ, գյուղատնտեսական և սննդի արտադրանքի արտահանումը որոշակիորեն նվազել է, ինչը կարող է բացատրվել ներքին սպառման աճով և արտահանման շուկաների փոփոխությամբ, սակայն այս ոլորտում դեռ կան մեծ հնարավորություններ՝ հատկապես որակյալ և օրգանական արտադրանքի արտահանման ուղղությամբ:

Գծապատկեր 4 (ա). ՀՀ ներմուծման ապրանքային կառուցվածքը 2012 թ., % [1]



Գծապատկեր 4 (բ). ՀՀ ներմուծման ապրանքային կառուցվածքը 2023 թ., % [1]



Ներմուծման ոլորտում 2012 թվականից 2023 թվականը նույնպես արձանագրվել են զգալի փոփոխություններ: Էներգակիրները, մասնավորապես՝ բնական գազը և նավթամթերքները, շարունակում են մնալ ներմուծման հիմնական ապրանքները, ինչը պայմանավորված է Հայաստանի էներգետիկ կախվածությամբ և տնտեսության զարգացման համար անհրաժեշտ էներգիայի պահանջարկով: Ներմուծման մեջ նկատվում է նաև մեքենաների և տեխնիկական սարքավորումների աճ, ինչը վկայում է ենթակառուցվածքների և արդյունաբերության զարգացման մասին: Սպառողական ապրանքների ներմուծման մասնաբաժինը որոշ չափով նվազել է, ինչը կարող է պայմանավորված լինել տեղական արտադրության ակտիվացմամբ կամ սպառողական վարքագծի փոփոխությամբ: Այս միտումները ցույց են տալիս, որ Հայաստանը փորձում է զարգացնել տեղական արտադրությունը և նվազեցնել արտաքին շուկաներից կախվածությունը որոշ ոլորտներում:

ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքը բնութագրող տվյալները վկայում են, որ Հայաստանի արտահանման կառուցվածքում վերջին տասնամյակում տեղի է ունեցել դիվերսիֆիկացում՝ դեպի տեխնոլոգիական և թանկարժեք ապրանքների արտահանում, մինչդեռ ներմուծման կառուցվածքում աճել է մեքենաների, սար-

քավորումների, ինչպես նաև թանկարժեք քարերի և մետաղների ներմուծման տեսակարար կշիռը: Այս միտումները ցույց են տալիս, որ Հայաստանի արտաքին առևտուրը դառնում է ավելի բազմազան և տեխնոլոգիապես զարգացած, սակայն հումքային ապրանքների դերը դեռևս մնում է կարևոր:

Նման կառուցվածքային փոփոխությունները բնորոշ են զարգացող տնտեսություններին, որոնք աստիճանաբար անցում են կատարում հումքային արտահանումից դեպի բարձր արժեք ունեցող ապրանքների արտադրություն և արտահանում: Տեխնոլոգիական ապրանքների և վերամշակող արդյունաբերության աճը, ինչպես նաև թանկարժեք քարերի ու մետաղների վերաարտահանման զարգացումը, նպաստում են տնտեսական աճի նոր աղբյուրների ձևավորմանը և արտաքին շուկաների դիվերսիֆիկացմանը: Միևնույն ժամանակ, նման կառուցվածքային փոփոխությունները պահանջում են շարունակական ներդրումներ կրթության, նորարարության և ենթակառուցվածքների ոլորտներում, որպեսզի երկիրը կարողանա լիարժեք օգտվել իր արտահանման ներուժից և ապահովի տնտեսության կայուն զարգացումը:

Արտաքին աղբյուրների համաձայն, Հայաստանի տնտեսությունը վերջին տարիներին անցնում է դեպի ավելի դիվերսիֆիկացված և

տեխնոլոգիական ուղղվածություն, ինչը արտացոլվում է նաև արտահանման կառուցվածքում: Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի զեկույցները նշում են, որ Հայաստանի տնտեսական աճը մեծապես կախված է արտահանման աճից և նոր շուկաների անցումից, ինչպես նաև ներդրումներից վերամշակող արդյունաբերության ոլորտում: Միաժամանակ, էներգետիկ անվտանգության ապահովումը և ներմուծման կառուցվածքի օպտիմալացումը շարունակում են մնալ առաջնահերթ խնդիրներ, որոնց լուծումը կբարձրացնի երկրի տնտեսական կայունությունը և մրցունակությունը միջազգային շուկայում: Այս համատեքստում Հայաստանի համար կարևոր է շարունակել զարգացնել տեղական արտադրությունը, խթանել նոր տեխնոլոգիաների ներդրումը և ընդլայնել արտահանման աշխարհագրությունը՝ նվազեցնելով հումքային ապրանքների գերակշռող դերը:

Հաշվի առնելով, որ 2022-2023 թթ. արտաքին առևտրի կառուցվածքը զգալիորեն խեղաթյուրվել է վերաարտահանման ծավալների կտրուկ աճի պատճառով՝ հետազոտության մեջ առանձին ուսումնասիրվել է 2021 թ. ՀՀ արտաքին առևտրի տվյալները: Վերջիններս թույլ են տալիս առավել օբյեկտիվ պատկերացում կազմել Հայաստանի արտաքին առևտրի իրական կառուցվածքի մասին՝ առանց վերաարտահանման ժամանակավոր ազդեցության:



Այսպես, 2021 թ. Հայաստանի արտահանման կառուցվածքում ամենամեծ տեսակարար կշիռը ունեցել են հանքային արտադրանքները՝ կազմելով արտահանման 27.7%-ը: Այս խմբում հատկապես առանձնանում է պղինձը (16.9%), որը շարունակում է մնալ Հայաստանի արտահանման առանցքային ապրանքներից: Թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի, մետաղների ու

դրանցից պատրաստված արտադրանքի բաժինը կազմել է 11.9%, ինչը նույնպես կարևոր տեղ է զբաղեցնում արտահանման կառուցվածքում: Մանրամթերքի և գյուղատնտեսական հումքի արտահանումը նույնպես պահպանել է իր նշանակալի դերը: 2021 թ. տվյալները ցույց են տալիս, որ արտահանումն էապես հիմնված է հումքային և գյուղատնտեսական ապրանքների վրա, սակայն նկատվում է նաև վերամշակված ապրանքների տեսակարար կշռի աճ:

Ներմուծման կառուցվածքում 2021 թ. գերակշռել են սննդամթերքը և գյուղատնտեսական հումքը՝ կազմելով ներմուծման 21.5%-ը: Հանքային արտադրանքների բաժինը կազմել է 16.9%, իսկ մեքենաների և սարքավորումների բաժինը՝ 13.1%: Իրենց հերթին, քիմիական արդյունաբերության ապրանքները կազմել են ներմուծման 8%, թանկարժեք քարերն ու մետաղները՝ 7.2%, իսկ դեղորայքը և բժշկական ապրանքները՝ 6.6%: Այս կառուցվածքը վկայում է, որ Հայաստանը զգալիորեն կախված է սննդամթերքի և գյուղատնտեսական հումքի ներմուծումից ևս, ինչը պայմանավորված է ինչպես ներքին պահանջարկի, այնպես էլ տեղական արտադրության սահմանափակումներով: Միաժամանակ, մեքենաների և սարքավորումների ներմուծման բարձր տեսակարար կշիռը խոսում է տնտեսության տեխնոլոգիական արդիականացման և ենթակառուցվածքների զարգացման մասին:

Ընդհանուր առմամբ, 2021 թ. տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի արտաքին առևտուրը շարունակում է մեծապես կախված մնալ հումքային և գյուղատնտեսական ապրանքներից, սակայն նկատվում են նաև դիվերսիֆիկացման և վերամշակող արդյունաբերության զարգացման նախնական միտումներ:

Գծապատկեր 5. ԵՄ ու ԵԱՏՄ երկրների մասնաբաժինը ՀՀ արտահանման (ձախից) և ներմուծման (աջից) մեջ 2012-2024 թթ., տոկոս [1]



Գծապատկեր 5-ը հստակորեն արտացոլում է Հայաստանի արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքի էական փոփոխությունները 2014-2023 թթ. ընթացքում՝ առանձնացնելով ԵՄ և ԵԱՏՄ երկրների հետ արտահանման և ներմուծման կշիռները տոկոսային արտահայտությամբ: Գծապատկերը ցույց է տալիս, որ 2014-2018 թթ. Հայաստանի արտահանման հիմնական ուղղությունը եղել է ԵՄ շուկան: Այդ տարիներին ԵՄ մասնաբաժինը արտահանման կառուցվածքում եղել է համեմատաբար բարձր՝ շուրջ 30%: Սակայն 2018 թ. հետո արտահանման կառուցվածքում տեղի է ունեցել զգալի շրջադարձ: ԵԱՏՄ երկրների մասնաբաժինը (հատկապես Ռուսաստանի Դաշնության) սկսում է կայուն աճել, և արդեն 2021-2023 թթ. այն դառնում է գերակշռող՝ հասնելով մոտ 45-50%-ի: Միևնույն ժամանակ, ԵՄ երկրների մասնաբաժինը արտահանման կառուցվածքում աստիճանաբար նվազում է՝ 2023 թ. հասնելով մոտ 15%-ի: Այս միտումը վկայում է, որ Հայաստանի արտահանման շուկաները վերջին տարիներին զգալիորեն կենտրոնացել են ԵԱՏՄ տարածքում, ինչը պայմանավորված է ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական գործոններով, այդ թվում՝ տարածաշրջանային ինտեգրացիայի խորացմամբ և ռուսական շուկայի առավել հասանելիությամբ:

Ներմուծման կառուցվածքում ևս նկատվում է նմանատիպ միտում: 2014-2018 թթ. ԵԱՏՄ-ից ներմուծման մասնաբաժինը եղել է համեմատաբար կայուն՝ մոտ 25-30%: Սակայն 2019 թ. հետո ԵԱՏՄ-ից ներմուծման մասնաբաժինը զգալիորեն աճում է և 2022-2023 թթ. հասնում 40%-ի: ԵՄ-ից ներմուծման մասնաբաժինը, ընդհակառակը, աստիճանաբար նվազում է՝ 2023 թ. կազմելով ընդամենը 15%: Այս փոփոխությունը վկայում է, որ Հայաստանի ներմուծման հիմնական աղբյուրները ևս տեղափոխվել են դեպի ԵԱՏՄ շուկաներ, ինչը կարող է պայմանավորված լինել ինչպես էներգակիրների, այնպես էլ տեխնիկական ապրանքների ներմուծման կառուցվածքային փոփոխություններով: Այս միտումները կարևոր են Հայաստանի արտաքին տնտեսական քաղաքականության գնահատման համար: ԵԱՏՄ շուկայի նկատմամբ աճող կախվածությունը կարող է ստեղծել նոր հնարավորություններ՝ կապված շուկայի հասանելիության և արտահանման ծավալների մեծացման հետ, սակայն մյուս կողմից, այն կարող է նաև ավելացնել տնտեսական և քաղաքական ռիսկեր՝ պայմանավորված շուկաների կենտրոնացմամբ և արտաքին գործոններից կախվածությամբ: ԵՄ շուկայի մասնաբաժնի նվազումը կարող է նշանակել, որ Հայաստանը կորցնում է որոշակի դիվերսիֆիկացիայի հնարավորություններ, ինչը կարևոր է տնտեսական կայունության համար:

Ընդհանուր առմամբ, վերջին տասնամյակում ականատես ենք լինում Հայաստանի արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքի շոշափելի փոփոխության՝ ԵՄ-ից դեպի ԵԱՏՄ շուկաներ: Այս միտումը պետք է հաշվի առնել հետագա տնտեսական ռազմավարությունների մշակման և արտաքին շուկաների դիվերսիֆիկացման քաղաքականության ձևավորման ժամանակ, որպեսզի ապահովվեն երկրի տնտեսական անվտանգությունն ու կայուն զարգացումը:

ԵՄ ու ԵԱՏՄ երկրների հետ ՀՀ արտաքին առևտրի վերաբերյալ առավել հիմնավորված պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է վերլուծել այնպիսի կարևոր ցուցանիշներ, ինչպիսիք են **արտաքին առևտրի կենտրոնացվածությունն ու ինտենսիվությունը**: Այս երկու ցուցանիշները թույլ են տալիս հասկանալ, թե որքան մեծ է տվյալ խմբավորումների նշանակությունը Հայաստանի արտաքին առևտրում, և թե որքան խորն են Հայաստանի առևտրային կապերը տվյալ երկրների խմբերի հետ:

Այսպես, առևտրի ինտենսիվությունը երկու երկրների միջև առևտրի և երկու երկրների ընդհանուր առևտրի հարաբերակցությունն է: Այն ցույց է տալիս, թե արդյոք երկու երկրների միջև երկկողմ առևտուրն ավելի ինտենսիվ է, թե պակաս, քան կարելի է ակնկալել՝ հաշվի առնելով երկրների տնտեսությունների չափը: Այլ կերպ ասած՝ առևտրի ինտենսիվությունը արտահայտում է որևէ երկրի կամ երկրների խմբի հետ տվյալ երկրի առևտրային հարաբերությունների խտությունը՝ վերջինիս ընդհանուր արտաքին առևտրի ծավալի հետ համեմատած: Օրինակ՝ երբ ուսումնասիրում ենք ՀՀ արտաքին առևտրի ինտենսիվությունը ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի հետ, մենք գնահատում ենք, թե որքան մեծ մասն է կազմում ՀՀ-ի առևտրաշրջանառությունը այս երկրների հետ՝ համեմատած ընդհանուր արտաքին առևտրի ծավալին:

2014 և 2024 թվականների ՀՀ արտաքին առևտրի ինտենսիվության ինդեքսները ցույց են տալիս մի շարք կարևոր փոփոխություններ ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի հետ առևտրային հարաբերություններում: 2014թ. ՀՀ-ԵՄ արտաքին առևտրի ինտենսիվությունը եղել է 1.08, ինչը նշանակում է, որ այդ ժամանակ Հայաստանի առևտուրը ԵՄ երկրների հետ համեմատաբար համաշխարհային միջինից փոքր-ինչ ավելի ինտենսիվ էր: Սակայն մինչև 2024 թ. այդ ցուցանիշը իջել է մինչև 0.38 (նվազել է ավելի քան 2.8 անգամ), ինչը վկայում է առևտրի ակտիվության զգալի նվազման մասին ԵՄ շուկայի հետ: Այս անկումը կարող է կապված լինել մի շարք գործոնների հետ, ինչպիսիք են արտաքին քաղաքական լարվածությունները, մաքսային և տեխնիկական սահմանափակումները կամ գլոբալ տնտեսական

ճգնաժամերը, որոնք առևտրային շղթաների վրա լուրջ ազդեցություն են ունեցել:

Աղյուսակ 1. ՀՀ արտաքին առևտրի ինտենսիվությունը ԵՄ և ԵԱՏՄ երկրների հետ

	ՀՀ-ԵՄ արտաքին առևտրի ինտենսիվու- թյունը	ՀՀ-ԵԱՏՄ արտաքին առևտրի ինտենսիվու- թյունը
2014	1.08	10.73
2024	0.38	3.02

Ի տարբերություն ԵՄ-ի հետ առևտրի՝ Հայաստանում ԵԱՏՄ-ի հետ առևտրային ինտենսիվությունը, չնայած կրկին զգալի նվազել է, դեռ պահպանվում է բարձր մակարդակի վրա: 2014 թ. ՀՀ-ԵԱՏՄ ինտենսիվությունը եղել է բավականին բարձր՝ 10.73, ինչը վկայում է, որ այդ ժամանակահատվածում ԵԱՏՄ ապագա անդամ երկրները (բնականաբար ՌԴ զգալի մասնաբաժնով) հանդիսանում էին Հայաստանի հիմնական առևտրային գործընկերներից: Սակայն մինչև 2024 թ. այդ ցուցանիշը նվազել է մինչև 3.02՝ նվազելով շուրջ 3.5 անգամ: Այս նվազումը վկայում է, որ, չնայած Հայաստանի և այդ խումբ երկրների միջև առևտրային հարաբերությունները դեռևս համաշխարհային միջինից բարձր մակարդակի վրա են, այնուամենայնիվ, վերջին տարիներին դրանք զգալիորեն թուլացել են: Հնարավոր պատճառներից կարող են լինել տարածաշրջանային քաղաքական փոփոխություններն ու դրանց հետևանքները, ինչպես նաև գլոբալ տնտեսության ճգնաժամերը:

Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ երկու ուղղություններով էլ առևտրի ինտենսիվությունը նվազել է, ինչը կարող է լինել հետևանք՝

- ✓ տնտեսության ներքին կառուցվածքային փոփոխությունների,
- ✓ արտաքին քաղաքական ու տնտեսական գործոնների (սանկցիաներ, պատերազմներ, փոխադարձ հարաբերությունների փոփոխություններ),
- ✓ նոր շուկաների որոնման կամ արտաքին առևտրի դիվերսիֆիկացիայի:

Իր հերթին, **արտաքին առևտրի կենտրոնացվածությունն** ավելի առարկայական դիտարկում է և վերաբերում է այն աստիճանին, որով երկրի առևտուրը կենտրոնացած է առևտրային գործընկերների կամ ապրանքների սահմանափակ թվի վրա: Բարձր կենտրոնացումը ցույց է տալիս, որ երկիրը կախված է գործընկերների կամ ապրանքների փոքր թվից, մինչդեռ ցածր կենտրոնացումը ենթադրում է առավել դիվերսիֆիկացված առևտրային հարաբերություններ: Դասական սահմանմամբ՝ կենտրոնացումը չափանիշ է այն բանի, թե որքանով է

առևտուրը կենտրոնացված առևտրային գործընկերների կամ ապրանքների փոքր թվի միջև, այլ ոչ թե հավասարաչափ բաշխված շատերի միջև [4]: Իրենց հիմնարար աշխատանքում Հերֆինդալը և Հիրշմանը ներկայացրել են Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը (HHI) որպես կենտրոնացման չափանիշ, որը հետագայում դարձել է լայնորեն ընդունված գործիք առևտրի կենտրոնացումը գնահատելու համար ինչպես գործընկերների, այնպես էլ ապրանքների համար:

Այսպիսով՝ եթե առևտրի ինտենսիվությունը դիտարկում է առևտրային հարաբերությունների խտությունը, ապա կենտրոնացվածությունը ցույց է տալիս առևտրի բեռնվածությունը ու հավանական կախվածությունը այս կամ այն տարածաշրջանից:

Աղյուսակ 2. ՀՀ արտաքին առևտրի կենտրոնացվածությունը ԵՄ և ԵԱՏՄ երկրների հետ (HHI), 2024 թ.

	ԵՄ	ԵԱՏՄ
Արտահանում	0.123	0.895
Ներմուծում	0.123	0.974
Ընդհանուր առևտուր	0.099	0.953

ՀՀ արտաքին առևտրի կենտրոնացվածության չափման համար կիրառվել է Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը (HHI), որը թույլ է տալիս հաշվարկել, թե ԵՄ և ԵԱՏՄ ուղղություններով որքանով է արտահանումը կամ ներմուծումը կախված մի քանի հիմնական գործընկերներից:

2024 թ. տվյալներով, ԵԱՏՄ երկրների հետ Հայաստանի առևտուրը խիստ կենտրոնացված է: Նման բարձր ցուցանիշները վկայում են, որ ՀՀ արտաքին առևտրի զգալի մասը ԵԱՏՄ-ի շրջանակում իրականացվում է մեկ գործընկերների՝ Ռուսաստանի Դաշնության հետ: Մասնավորապես, միջինում ՌԴ-ն ապահովում է ԵԱՏՄ ներմուծման շուրջ 98%-ը և արտահանման ավելի քան 80%-ը: Այս իրավիճակը վկայում է ոչ միայն տնտեսական կախվածության բարձր մակարդակի, այլ նաև շուկայի խոցելիության մասին՝ հատկապես աշխարհաքաղաքական կամ տնտեսական ցնցումների պայմաններում:

Ի տարբերություն ԵԱՏՄ-ի՝ ԵՄ երկրների հետ Հայաստանի առևտրային կապերն ունեն շատ ավելի դիվերսիֆիկացված կառուցվածք: Չնայած նրան, որ որոշ երկրներ (օր.՝ Գերմանիա, Իտալիա, Նիդերլանդներ) ունեն բարձր ներգրավվածություն առանձին ուղղություններով՝ ԵՄ գործընկերների շրջանակը բավականին լայն է՝ ներառելով շուրջ 25 երկիր: Բացի այդ, արտահանման և ներմուծման հիմնական ուղղությունները չեն համընկնում, ինչն էլ հանգեցնում է ընդհանուր առևտրի ավելի ցածր կենտրոնացվածության ցուցանիշի: Սա վկայում է արտաքին շուկաների բազմազանության և

առևտրի դիվերսիֆիկացման ջանքերի արդյունավետության մասին:

Այսպիսով՝ ՀՀ արտաքին առևտրի կենտրոնացվածության ցուցանիշների համադրությունը հստակ ցուցադրում է երկրի արտաքին տնտեսական կառուցվածքի երկու հիմնական, իրար հակասող բնութագրիչները՝ բարձր կենտրոնացվածությունը ԵԱՏՄ շուկայի նկատմամբ և համեմատաբար դիվերսիֆիկացված ու ավելի կայուն առևտրային կապերը ԵՄ երկրների հետ:

Այս երկու կողմերն էլ ունեն իրենց առավելություններն ու ռիսկերը: Մասնավորապես, ԵԱՏՄ շուկայի բարձր կենտրոնացվածությունը հիմնականում պայմանավորված է ՌԴ-ի հետ տնտեսական և քաղաքական հատուկ հարաբերություններով: Այս շուկան ապահովում է Հայաստանի համար զգալի ծավալների արտահանման և ներմուծման հոսքեր, ինչը տալիս է որոշակի երաշխիքներ և տնտեսական անխափանություն՝ համեմատած այլ գործընկեր երկրների հետ: Այնուամենայնիվ, նման կախվածությունը միաժամանակ մեծացնում է Հայաստանի տնտեսության խոցելիությունը՝ հատկապես աշխարհաքաղաքական լարվածությունների և սանկցիաների պայմաններում, տնտեսական ճգնաժամերի կամ մատակարարման շղթաների խափանումների դեպքում կամ Ռուսաստանի ներսում կամ միջազգային դաշտում հանկարծակի փոփոխությունների արդյունքում, ինչի ակասատես ենք վերջին տարիներին:

ԵՄ-ի հետ առևտրի դիվերսիֆիկացված բնույթը խոսում է Հայաստանի տնտեսական քաղաքականության միտումների մասին՝ ընդլայնելու արտաքին շուկաների շրջանակը, պահպանելու ներմուծման և արտահանման ուղղությունների դիվերսիֆիկացիան: Այս մոտեցումը նպաստում է տնտեսական կայունության բարձրացմանը, ռիսկերի տարածմանը և ավելի բազմակողմանի տնտեսական համագործակցության զարգացմանը: Այն նաև ապահովում է նոր տեխնոլոգիաների, ծառայությունների և ապրանքների մուտք դեպի ներքին շուկա՝ բարելավելով մրցունակությունը և խթանելով տեղական արտադրությունը:

Այսպիսով՝ ՀՀ արտաքին առևտրի կենտրոնացվածության չափումն արտաքին տնտեսական քաղաքականության տեսանկյունից ենթադրում է, որ Հայաստանի համար նպատակահարմար է շարունակել արտաքին շուկաների դիվերսիֆիկացման ուղին՝ հատկապես խորացնելով առևտրային կապերը ԵՄ-ի և այլ տարածաշրջանների (երկրների) հետ՝ ի նպաստ տնտեսական կայունության և խոցելիության նվազման:

Համաշխարհային շուկայի համեմատ երկրի արտահանման ուժեղ կողմերի բացահայտման մեկ այլ գործիք է **բացահայտված համեմա-**

տական առավելության (RCA) համաթիվը, որը մշակվել է Բելա Բալաշայի կողմից դեռևս 1965 թ. և լայնորեն կիրառվում է մինչ օրս: Ի տարբերություն ավանդական համեմատական առավելության, որը հիմնված է տեսական մոդելների և այլընտրանքային ծախսերի վերաբերյալ ենթադրությունների վրա՝ RCA համաթիվը հիմնված է իրական առևտրային տվյալների վրա: Այն բացահայտում է, թե արդյոք երկիրը արտահանում է որոշակի ապրանքի ավելի մեծ քանակություն, քան կարելի էր ակնկալել՝ հիմնվելով իր ընդհանուր արտահանման պրոֆիլի և համաշխարհային առևտրի օրինաչափությունների վրա [3]:

RCA համաթիվն օգնում է քաղաքականության մշակողներին և տնտեսագետներին հասկանալ, թե որտեղ են գտնվում երկրի արտահանման ուժեղ կողմերը՝ հիմք ընդունելով առևտրային քաղաքականությունը, արդյունաբերական ռազմավարությունը և ներդրումային որոշումները: Այն նաև օգտակար մեկնարկային կետ է մրցակցային ներուժ ունեցող կամ լրացուցիչ աջակցությունից կամ դիվերսիֆիկացիայից օգուտ քաղող ոլորտները բացահայտելու համար:

ԵԱՏՄ և ԵՄ ուղղություններով Հայաստանի արտահանման RCA համաթիվի գնահատումը գործնականում մի շարք բարդությունների է բխվում՝ պայմանավորված հատկապես այն հանգամանքով, որ երկու ուղղություններով արտահանման առաջատար ապրանքախմբերը էապես տարբերվում են, իսկ միաժամանակ այդ ապրանքատեսակների համար համադրելի և ամբողջական վիճակագրական տվյալների հասանելիությունը հաճախ սահմանափակ է:

Այնուամենայնիվ, RCA գնահատման համար որպես օրինակ վերցվել են կոնյակը և գինին՝ ելնելով մի շարք գործնական և մեթոդաբանական նկատառումներից: Նախ, կոնյակը և գինին Հայաստանի արտահանման ավանդական և ճանաչված ապրանքատեսակներ են, որոնք միաժամանակ կարևոր տեղ են զբաղեցնում երկրի արտաքին առևտրի ապրանքային կառուցվածքում: Դրանք չեն ներկայացնում հումքային բնույթի արտադրանք, այլ արդյունաբերական վերամշակման ենթարկված, բարձր ավելացված արժեք ունեցող ապրանքներ են, ինչը թույլ է տալիս ավելի ճշգրիտ գնահատել երկրի արտադրական հնարավորությունները և շուկայի կողմնորոշվածությունը:

Երկրորդ, այս ապրանքները ունեն արտահանման կայուն ծավալներ ինչպես ԵԱՏՄ, այնպես էլ ԵՄ շուկաներ, ինչը հնարավորություն է տալիս՝ դիտարկելու և համեմատելու նույն ապրանքախմբերի նկատմամբ Հայաստանի մրցակցային դիրքավորումը երկու տնտեսական բլոկներում: Մասնավորապես, Հայաստանը

տասնամյակներ շարունակ կոնյակ է մատակարարում ռուսական շուկա՝ զբաղեցնելով այս ապրանքային շուկայում խոշոր դեր, մինչդեռ վերջին տարիներին նկատվում է նաև գինու արտահանման ան դեպի ԵՄ շուկաներ:

Բացի դրանից, կոնյակի և գինու ընտրությունը պայմանավորված է համապատասխան տվյալների առկայությամբ և միջազգային համադրելիությամբ: Այս ապրանքները մաքսային համադրելի կողեր ունեցող շուկայի ապրանքներ են (HS դասակարգման 2208 և 2204 խմբեր), ինչը թույլ է տալիս կիրառել Բալաշայի ինդեքսի հաշվարկի ստանդարտ մեթոդաբանություն՝ համադրելով Հայաստանի և թիրախային ուղղությունների տվյալները:

Աղյուսակ 3. ՀՀ արտահանման բացահայտված համեմատական առավելության (RCA) համայնքի ընտրված ուղղություններով ու ապրանքախմբերով, 2024 թ.

	ԵՄ	ԵԱՏՄ
Գինի	255.97	0.20
Կոնյակ	2.99	53.90

Հայաստանի արտահանման RCA վերլուծությունը կոնյակի և գինու օրինակով ընդգծում է երկրի արտաքին տնտեսական մասնագիտացման որոշ առանձնահատկություններ ԵՄ և ԵԱՏՄ շուկաներում: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ԵՄ շուկայի դեպքում Հայաստանը ունի արտահանման համեմատական առավելություն ինչպես գինու, այնպես էլ կոնյակի առումով: Մա հատկապես շեշտադրված է կոնյակի պարագայում, որտեղ RCA ցուցանիշը վկայում է ոչ միայն մրցակցային դիրքի առկայության, այլ նաև հայկական կոնյակի նկատմամբ բարձր պահանջարկի մասին: Գինու պարագայում ևս Հայաստանի դիրքը համեմատաբար ուժեղ է ԵՄ ներմուծման կառուցվածքում, ինչը թույլ է տալիս գնահատել այս ուղղությունը որպես զարգացման և խթանման պոտենցիալ ունեցող շուկա:

Չնայած այն հանգամանքին, որ ԵՄ շուկայում Հայաստանի արտահանման RCA ցուցանիշները կոնյակի և գինու համար բավականին բարձր են, անհրաժեշտ է նկատել, որ այդ արդյունքները պետք չէ գերազնահատել՝ հաշվի առնելով շուկայի ընդհանուր կառուցվածքը: ԵՄ-ն համարվում է ինչպես գինու, այնպես էլ կոնյակի պատմական և մշակութային հայրենիք, որտեղ կենտրոնացած են համաշխարհային ամենախոշոր արտադրողներն ու արտահանողները՝ Ֆրանսիայից մինչև Իտալիա և Իսպանիա: Այդ համատեքստում հայկական արտադրանքի՝ մասնավորապես կոնյակի նկատմամբ ԵՄ շուկայում ձևավորված պահանջարկը պայմանավորված է ոչ այնքան մեծածավալ ներմուծմամբ, որքան իր նկատմամբ գոյություն ունեցող

յուրահատուկ վերաբերմունքով, որը ձևավորվել է որպես նեղ սպառողական շուկայի հատվածում ընկալվող բրենդ: Այսինքն՝ RCA ցուցանիշի բարձր լինելը ավելի շուտ արտացոլում է հայկական կոնյակի և գինու մասնագիտացված ներմուծման բնույթը՝ որպես տարբերակիչ, մշակութային արժեքով և էթնիկ հենքով ապրանք, քան լայնածավալ առևտրային հաջողություն:

ԵԱՏՄ շուկայում RCA համաթվի վերլուծության արդյունքները միանշանակ չեն: Կոնյակի պարագայում Հայաստանը շարունակում է պահպանել ուժեղ արտահանման համեմատական առավելություն՝ պայմանավորված ինչպես պատմականորեն ձևավորված պահանջարկով, այնպես էլ երկարաժամկետ առևտրային կապերով: Մակայն գինու դեպքում RCA ցուցանիշը շատ ցածր է՝ ինչը վկայում է այդ ապրանքախմբի նկատմամբ մրցակցային դիրքի բացակայության մասին: Մա փաստում է, որ ԵԱՏՄ շուկայում գինու արտահանման պոտենցիալը սահմանափակ է կամ դեռևս չիրացված: Այս տարբերությունները մի կողմից պայմանավորված են տարածաշրջանային սպառման նախընտրություններով և շուկայի կառուցվածքով, իսկ մյուս կողմից՝ արտահանման ռազմավարության ուղղվածությամբ:

Ուշագրավ է, որ ԵԱՏՄ շուկայում հայկական գինու համեմատաբար թույլ դիրքը մեծապես կարող է պայմանավորված լինել վրացական գինու բարձր մրցունակությամբ: Վրաստանը վաղուց է կայացրել իր դիրքը հատկապես ռուսական շուկայում՝ որպես գինու հիմնական մատակարարներից մեկը: Վրացական գինիներ տարբեր տեսականու, հնեցման ավանդույթների և հասանելի գների շնորհիվ լայն ճանաչում են վայելում ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ԵԱՏՄ այլ անդամ երկրներում: Բացի դրանից, Վրաստանի շուկայի հարաբերական մերձությունը, ինչպես նաև ազատ առևտրի ռեժիմը ԵԱՏՄ-ի հետ, հնարավորություն են տալիս վրացական գինուն՝ առավել լայն ու մատչելի ներկայություն ապահովելու այդ շուկայում: Այս պայմաններում հայկական գինին դժվարանում է մրցել թե գնի, թե ճանաչելիության, և երբեմն նաև որակի ընկալման մակարդակով: Այսպիսով կարելի է ենթադրել, որ ԵԱՏՄ շուկայում հայկական գինու համեմատական առավելության բացակայությունը ոչ միայն արտահանման ծավալների խնդիր է, այլ նաև մրցակցային միջավայրի՝ մասնավորապես վրացական գինու գերակայության արդյունք: Հետևաբար, հայկական գինու մրցունակության բարձրացման համար անհրաժեշտ են նպատակային շուկայավարական քայլեր, բրենդի զարգացում, գնի ու որակի քաղաքականության հստակեցում և հավանաբար նոր շուկաների որոնում ԵԱՏՄ շրջանակից դուրս:

Արդյունքում, այս վերլուծությունը ոչ միայն ցուցադրում է առկա մրցակցային առավելությունները, այլ նաև կարող է ծառայել որպես քաղաքականության ձևավորման գործիք: Առևտրի դիվերսիֆիկացիայի, շուկաների բազմազանեցման և արտահանման կառուցվածքի բարելավման տեսանկյունից նման ցուցանիշների մշտադիտարկումը կարևոր է՝ ապահովելու կայուն և հավասարակշռված արտաքին տնտեսական զարգացում:

Հայաստանի արտաքին առևտրի քաղաքականությունը գտնվում է միաժամանակ երկու հիմնական իրավական և ինստիտուցիոնալ վեկտորների ներքո՝ ԵԱՏՄ-ի և ԵՄ-ի հետ կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի: Այս երկու համաձայնագրերը ներկայացնում են տնտեսաքաղաքական ինտեգրման տարբեր մոդելներ՝ իրենց յուրահատուկ նպատակի, մեխանիզմների և ազդեցության տրամաբանությամբ: Դրանց համատեղ գոյությունը ձևավորել է Հայաստանի արտաքին առևտրի բազմավեկտոր զարգացումն ու քաղաքական ճկունության յուրահատուկ մոդելը:

ԵԱՏՄ-ին անդամակցությամբ Հայաստանը դարձել է միության մաքսային և տեխնիկական տարածքի մաս, ինչը նշանակում է ապրանքների ազատ շրջանառություն անդամ պետությունների միջև, միասնական մաքսային սակագների կիրառում և տեխնիկական կանոնակարգերի միասնականացում ԵԱՏՄ ընդունած իրավական ակտերին: Սա ապահովում է շուկայի արագ և առանց մաքսային սահմանափակումների հասանելիություն՝ հատկապես Ռուսաստանի ուղղությամբ:

Ի տարբերություն ԵԱՏՄ պայմանագրի՝ ՀԸԳՀ-ն իրավականորեն պարտավորեցնող, սակայն ոչ մաքսային ինտեգրման համաձայնագիր է, որը չունի միասնական մաքսային կամ սակագնային ռեժիմ: Այն խարսխված է ոլորտային բարեփոխումների վրա, նպատակ ունի՝ Հայաստանը մոտեցնելու ԵՄ իրավական և ինստիտուցիոնալ չափանիշներին, այդ թվում՝ մրցակցության, պետական գնումների, մարդու իրավունքների և կայուն զարգացման ոլորտներում: Տնտեսական իմաստով այն թույլ է տալիս մուտք դեպի ԵՄ շուկան՝ կարգավորիչ ներդաշնակեցման պայմանով:

Տեխնիկական կանոնակարգերի համեմատությունը՝ որպես առևտրի իրավական միջավայրի առանցքային բաղադրիչ, արտահայ-

տում է այդ երկու համակարգերի տրամաբանության խոր տարբերությունը: ԵԱՏՄ համակարգում կանոնակարգերը պարտադիր են՝ սահմանված միասնական ձևաչափով և տարածվում են բոլոր անդամների վրա: Որևէ ապրանք, որը հաստատվել է ԵԱՏՄ համապատասխանության շրջանակում, կարող է ազատորեն շրջանառվել միության ներսում, ինչը թույլ է տալիս նվազեցնել սերտիֆիկացիոն բեռը ԵԱՏՄ ուղղությամբ արտահանման համար:

ՀԸԳՀ-ն առաջարկում է կարգավորիչ մոտարկում՝ առանց պարտադրանքի, սակայն շուկայի հասանելիության համար անհրաժեշտ է համապատասխանել ԵՄ պահանջներին: Այս համակարգը խրախուսում է արտադրանքի որակի բարձրացումը, սակայն բարդացնում է արտահանման գործընթացը փոքր տնտեսավարողների համար, որոնք բախվում են սերտիֆիկացման, տեխնիկական փաստաթղթերի պատրաստման, լաբորատոր փորձաքննությունների և վերահսկողության դժվարություններին:

ԵԱՏՄ անդամակցությունը նպաստել է Հայաստանի գյուղատնտեսական, սննդամթերքի և ակոհոլային ոլորտների արտահանման աճին: Հայաստանի արտադրողները հաճախ համապատասխանում են ԵԱՏՄ պահանջներին՝ առանց արտադրական գործընթացների էական վերակառուցման, իսկ ԵԱՏՄ շուկան մնում է համեմատաբար հասանելի՝ հատկապես լոգիստիկ, լեզվամշակութային և քիզնես կապերի առումով: Միևնույն ժամանակ, Հայաստանի մաքսային ինքնիշխանության սահմանափակումները՝ միության սակագնային քաղաքականության պատճառով, կարող են բարձրացնել որոշ ապրանքների ներմուծման արժեքը՝ հատկապես ոչ ԵԱՏՄ երկրներից:

ՀԸԳՀ-ն, չնայած իր կարգավորիչ բարդություններին, ստեղծում է որակապես նոր հնարավորություններ՝ դեպի բարձրարժեք շուկաներ արտահանելու, արտադրանքի եվրոպականացված ստանդարտների անցնելու և երկարաժամկետ ներդրումային վստահություն ձևավորելու առումով: Այնուամենայնիվ, ներկայում ԵՄ շուկա արտահանվող արտադրանքի ծավալները համեմատաբար փոքր են, ինչի պատճառները ոչ միայն սերտիֆիկացիայի ծախսերն են, այլև ԵՄ բարդ պահանջների բախումը Հայաստանի արտադրական իրականության հետ:

Աղյուսակ 4. ԵԱՏՄ ու ԵՄ/ՀԸԳՀ առևտրի իրավական համակարգերի համադրություն

Ցուցանիշ	ԵԱՏՄ	ԵՄ / ՀԸԳՀ
Մաքսային համակարգ	Միասնական մաքսային տարածք՝ համատեղ սակագնային քաղաքականությամբ	Հայաստանի ինքնուրույն մաքսային համակարգ, առանց մաքսային միության պարտավորության

